

4979

ԿԵԱՆՔԻ
ԾՐԱԳԻՐՆԵՐ

ԿԱԶՄԵՅ

ՍԵՐՈՎՐԷ ՎՐԻՊ. ՍԱՄՈՒԷԼՆԱՆ

Թարգմի

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԳ. Ս. Մ. ԱԶՆԱԽՈՐ, ՊԱՊԸ Ա.Ի. 49

1911

117

Ս. 117

14 JUL 2009

Հա. Պր.
Օւ. զեւեց
Բեր
4 Հոգ. 1911
Հոգ. Կարապետ
Կարապետ
Կարապետ
Կարապետ

ԿԵԱՆՔԻ

ԾՐԱԳԻՐՆԵՐ



ԿԱԶՄԵՑ

ՍԵՐՈՎԵՐ ԴԵԳՊ. ՍԱՄՈՒԷԼՆԱՆ
Թարգմանի



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԳ. Յ. Մ. ԱԶՆԱԲՈՐ, ՊԱՊԸ ԱԼԻ, 46

1911

17
J-17



Դ Յիշատակ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

ԴԱՐԱՆԱՅԻՆ

III



Դ ՆՈՂԻՆ ԶՈՍՈՒՆ ՄՈՂՈՅԵԼՈՅ



1908

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Զանազան ժամանակներ, այլ եւ այլ թերթերէն, հանդեսներէն եւ գրքերէն փաղելով եւ քարգմանելով — աննշան լսելումներով, յայտնումներով եւ պարզաբանութիւններով կազմեցինք ներկայ ԿԵԱՆՔԻ ԾՐԱԳԻՐՆԵՐ, որոյ ուշադիր ընթերցումը, մանաւանդ խղճամիտ գործադրութիւնը — կը կարծենք — կրնայ օգտակար ըլլալ Հայ պատանիներուն, երիտասարդներուն եւ ամեն կարգի եւ հասակի գործի սեր մարդիկներուն:

Եթէ այս փանափ աշխատութեամբ կարողանանք փոքր ի շատեւ ծառայութիւն մատուցանել մեր սիրելի ազգայնոց, այդ պիտի ըլլայ մեր վարձատրութիւնն ու մեր մխիթարութիւնը:

Այս առթիւ քաղցր պարտականութիւն կը համարինք հրապարակաւ խորին շնորհակալութիւն յայտնել Դամասկացի բարեհամբաւ վանառական, Մեծ. Խաչատուր Էֆէնճի Գրիգորեանին (հօրեղբայր վաղամեռիկ Յարութիւն Գրիգորեանի) որ տպագրութեան ծախքը հոգալով, այս աշխատութեան լոյս տեսնալուն պատճառ դարձաւ:

Նաճա

Ս. Վ. Ս.

15 Դեկտ. 1910



62891-67

«Անձնիւր ոք սցնայէս ապրէրու է որ աշ-
խարհ իր կեանքին հաւեար երախսարարս ըլլայ
իրեն»:

«Կեանքի սրայթարին մէջ յաջողութիւնը ձրի
չ'է: Մեծ մարդիկ իրենց կեանքը առեւտարիս
կանոններու հարսակեցնելով՝ յաջողած եւ
բարձր դիրք գրաւած են: Կարգ եւ կանոն յա-
ջողութեան անհրաժեշտ պայմաններն են»:

«Գրեթէ անկարելի» է ճշդիւ գնահատել թէ
մարդ ո՛րքան խաղաղութիւն կը պարգեւէ ուրի-
շին, եւ ո՛րքան ուռախաղաղութիւն իւր անձին, իւր
կեանքը ըստ կառավարելով»:

ԿԵԱՆՔԻ

ՄՐԱԳԻՐՆԵՐ

Ա.

Աշխատութեան արդիւնք

Որեւէ աշխատութենէ մը հետք եղածին չափ արդիւնք քաղելու համար պէտք է ուշադիր ըլլալ հետեւեալ երեք պայմաններուն .—

1.— Մարդ պէտք է զիանայ իր ընելիքը ունէ պաշտօնի եւ ասպարէզի մէջ, եւ ասոր համար յատուկ ծրարիր մը պատրաստէ :

2.— Պէտք է յանձն առնէ աշխատութիւնը, յողնութիւնը, — այսինքն բաղձացուած նպատակը յաջողցնելու համար ջանք եւ յարաշեւութիւն պէտք է ունենայ :

3.— Պէտք է ուշադրութեամբ փնտռէ եւ զանեւ ունէ գործի զիւրին միջոցները, եւ քիչ աշխատուած թեամբ զլուս ելլելիք գործի մը համար աւելի ոյժ

և ժամանակ չի վատնէ. որովհետեւ գործունէութիւնն ու ժամանակը դրամագլուխներ են, զորս պարտաւ տեղը վատնելը խելքի գործ չ'է :

Բ.

Կոնֆիցիոսի Մրագիրը

Ձինական կրօնի հիմնադիր Կոնֆիցիոսի[*] վարդապետութեան ծուծը կը կազմեն հետեւեալ հինգ բարձրագոյն առաքինութիւնները կամ պարտականութիւնները. —

1. — Մարդասիրութիւն՝ այսինքն կարեկցութիւն դէպ 'ի մեզ նմանները-առանց խորութեան :

2. — Արդարադատութիւն, կամ հատուցումն իւրաքանչիւրին ըստ արժանւոյն-առանց կեղծաւորութեան :

3. — Հնազանդութիւն գործադրուող օրէնքներու և կառարումն տիրապետող կրօնքէն հաստատուած ծէսերու :

[*] Կոնֆիցիոս, որ կը կոչուի նաեւ Կոնֆուցիոս, Կոնգծեմ և Կոնգ, ծնած է 551 ին (Ք. Ա.) իւ հաւանգին մէջ՝ ազնուական ծնողներէ, իւ փարդապետական պաշտօնը սկսած է 22 տարեկան հասակին մէջ և քաղմարի աշակերտներ հասցնելի յետ մեռած է 478 ին, 73 տարեկան հասակին մէջ :

4.—Ճեմարսասիրութիւն, այսինքն կատարեալ
գլխունք դէպ 'ի կեղծն ու ստութիւնը:

5.—Վերջապէս ճեմարսութիւն և ազնուութիւն
միշտ և ամէն բանի մէջ:



9.

Տասնաքսնեան

Միացեալ-Նահանգաց Կարգիլու նախագահը հե-
տեալ տասնաքանեան տուած է իր որդւոյն.—

1.— Այս օրուան զործղ վաղուան մի՛ ձգեր:

2.— Այն բանը, զոր զու պարտիս ընել, ու-
րիշին կատարել մի՛ տաք:

3.— Դրամ մի՛ ծախսեր, զայն նախ ձեռացդ
մէջ չ'ունեցած:

4.— Անօգուտ բան մը մի՛ գներ աժան ըլլա-
լուն համար:

5.— Հպարտութիւնը աւելի սուղի կը նստի
բան անօթութիւնը, ծարաւը և ցուրտը:

6.— Բնաւ պիտի չ'զլջանք քիչ կերած ըլլալ-
նուս համար:

7.— Այն բանը որ սիրով կ'ընենք՝ չի յողնե-
ցներ գ'մեղ:

8.— Հոգը յաճախ անպէտ հարչարանք կը
պատճառէ:

9.— Ամէն բան լաւ կողմէն նկատէ՛ :

10.— Երբ բարկացած ես՝ մէկէն մինչեւ տասը համբէ, և եթէ զայրացած ես՝ մինչեւ հարիւր և ապա խօսէ՛ :



Դ.

Մարդը

Մարդն ա՛յն է որ կը հաւատայ կեանքին, ժաւմանակի օգտակարապէս սահելուն, արդիւնաւոր աշխատութեան, վշտի մխիթարար և օրհնաբեր հանդամանքին :

Մարդն ա՛յն է որ ինքզինք կը յանձնէ ամէն բաներն ստեղծող կամօքին :

Մարդն ա՛յն է որ սէր կը տածէ իր սրտին մէջ, որ իր երջանկութիւնն ուրիշներու երջանկութեանէն անջատ բան մը չի նկատեր, որ ուղղութեամբ կը քալէ, որ մարդկային ցեղը կը սիրէ իր ընտանիքին և իր ազգին պէս՝ իր լոյսը սրտովը և անհրաժեշտ եղող անձնութեամբ :

Մարդն ա՛յն է որ ինքզինք կառավարել կը ջանայ՝ ո՛չ թէ իր կիրքերուն, իր շահերուն կամ ուրիշներու քմայքներուն համեմատ. այլ ուղղութեան, ճշմարտութեան և արդարութեան օրէնքին համեմատ :

Մարդն ա՛յն է որ գիտէ զոհողութիւն ընել :

ամէն բարի, սիրելի և պաշտելի բանի համար: Այն է որ չարութիւնը կ'ատէ, զխոնալով թէ՛ չարութիւնն է մեր մեծագոյն, թշնամին:



Գործի քաւմեղանկ կանոններ

Լոնտոնի առևտրական սենեկին նախագահը տասն- և մէկ կանոն կուտայ, զորս ինքն փորձած է տարիներով, և ուրիշներու կը յանձնարարէ իբրև յաջողութեան հասնելու էական պայմաններ:

1. — Ունեցէ՛ք որոշ նպատակ մը:
2. — Ուղղակի անոր դիմեցէ՛ք:
3. — Ամէն մանրամասնութիւններուն հմուտ եղէ՛ք:
4. — Զեղմէ՛ ակնկալուածէն միշտ աւելի բան գիտցէ՛ք:
5. — Յիշեցէ՛ք որ զժողովութիւններն եղած են միայն յաղթուելու համար:
6. — Զանոնք զործածեցէ՛ք իբրև նոր ճիգերու խթան և կռուան:
7. — Երբէք մի՛ երկնցնէք ձեր ձեռքը այնչափ, որ չի կրնաք ետ քաշել զայն:
8. — Երբեմն խիզախ եղէ՛ք, բայց միշտ խոհեմ:
9. — Օգուտ քաղեցէ՛ք ուրիշներու ուղեղներէն և փորձառութենէն:

10. — Լաւ միտ դրէ՛ք, զգուշութեամբ պատաս-
խանեցէ՛ք, արագ որոշեցէ՛ք :
11. — Ձեր բոլոր կարողութեամբը՝ առողջ մարմնոյ
մէջ առողջ միտք մը պահեցէ՛ք :

2.

Պարոն Ռոյիկի ծրագիրը

Մեծահռչակ Պարոն Ռոյիկը հետեւեալ պայման-
ները կը դնէ գործի մէջ յաջողութիւն զտնելու
համար . —

1. — Գործերուդ մանր մասերուն անգամ զգու-
շութեամբ հոգ տար :
2. — Ամէն բանի մէջ փութկոտ և ժիր եղիր :
3. — Նեղութեանց համբերէ՛ :
4. — Կենաց զժուարութիւններուն դէմ քաջու-
թեամբ պատերազմէ՛ :
5. — Գործի մէջ ուղղութիւնը նուիրական ըլլայ
քեզի :
6. — Ուրիշներու գործին կամ համբաւին մի՛
վնասեր :
7. — Առաքինի մարդոց հետ միայն ընկեր եղի՛ր :
8. — Չար խորհուրդներէ միտքդ պահէ՛ :
9. — Որեւիցէ նպատակաւ սուտ մի՛ խօսիր :
10. — Քիչերը քեզի մտերիմ ըրէ՛ :
11. — Երբէք մի՛ ջանար երեւիլ ինչ որ չ'ես :
12. — Միշտ, ամէն տեղ և ամէնու հետ քաղա-
քավարութեամբ վարուէ՛ :

13.— Պարտքդ շուտ տո՛ւր:

14.— Մի՛ ճաշակեր, մի՛ գործածեր ոգելից ըմպելիք:

15.— Եռանդեամբ աշխատէ՛ այն բանին համար, որ ուղիղ է: Եւ ստուգիւ յաջողութիւն կը դտնես:

*
**

Յաւելուած.— Գործի մէջ յաջողելու համար կը բաւէ հաստատուն կամք ունենալ. սա իր հետ կը բերէ երկու անբաժան ընկերները Աշխատութիւն և Յաւատարմութիւն: Հաստատուն կամք ունեցողին համար «չ'եմ կրնար»ը գոյութիւն չ'ունի:

Է.

Կրօնի

1.

Երիտասարդներ ընդհանրապէս սա սխալ գաղափարը առեր են թէ՛ կրօնքը ծանր բեռներ կը դնէ իրենց վրայ: Արդարեւ կրօնքը պահանջումներ ունի իւրաքանչիւր երիտասարդէ. բայց թէ ատոնք անտանելի բեռներ են՝ թէ ճշմարտապէս մարդ ըլլալու համար անհրաժեշտ պայմաններ, ուշիմ ընթերցողաց կը թողունք վճռել: — Կրօնքը հետադայ բանաւոր պահանջումները կ'ընէ իւրաքանչիւր երիտասարդէ. —

1. — Թէ՛ երիտասարդը պէտք է ինքզինք կարելի եղածին չափ լաւագոյնը ընէ:

2. — Թէ՛ պէտք է ներկայացող պատեհութիւններէն մեծագոյնն օգուտը քաղէ:

3. — Թէ՛ պէտք է աշխատասէր, ուղղամիտ, հաւատարիմ և գործունեաց ըլլայ:

4. — Թէ՛ իր կարողութիւններէն, մեծ ըլլան թէ փոքր, մեծագոյնն օգտակարութիւնը արտադրելու է:

5. — Թէ՛ ո՛չ ժամանակի, ո՛չ ալ դրամի մասին մտադ ըլլալու է:

6.— Թէ՛ իր կեանքի նշանաբանը պէտք է ըլլայ «պարտականութիւն», ո՛չ թէ «հաճոյք» կամ «հանգիստ կեանք»:

Արդ ականքն է թէ՛ կեանքի պայքարին մէջ յաջողելու աշխատող երիտասարդին լաւագոյն բարեկամն է կրօնքը: Որոյ շնորհիւ՝ գրեթէ առանց բացառութեան ամէն օր ինկածներ, անառակներ, գինոջներ, վատահամբաւ սրիկաներ, ապականեալ սինլքորներ կը բարձրանան, կ'ազնուանան և օրինակելի մաքրութեամբ կեանք կը վարեն — Աստուծոյ հաճելի և մարդկութեան օգտակար: — Կրօնքէն զատ ո՞ր զօրութիւնը աշխարհի վրայ կրնայ յառաջ բերել այս հրաշալի արդիւնքը:



Ը.

Կրօնք

2.

Համոզուած եմ թէ՛ անհատական ու ընտանեկան բարոյականին լաւագոյն հիմը, սատարը և հակակշիռը կրօնն է տակաւին, զոր բանով մը չ'ենք կրցած փոխարինել մինչև ցայսօր, և յայտնի չ'է թէ պիտի կրնա՞նք փոխարինել երբէք: Ձեմ տեսներ մարդկային յառաջդիմութեան համար ո՛րքա՞նք ենք, որ կարենայ երևան գալ անհատական ու ընտանեկան բարեպաշտութենէն և եկեղեցասիրութենէն: Ընդհակառակն կարծեմ թէ որոշ կը տեսնուին անկրօն կեանքի, ամբարիշտ վարք ու բարքի, թերահաւատ կամ անհաւատ ընթացքի ողբալի տեսարանները թէ՛ անհատներու վրայ և թէ՛ ընտանիքներու մէջ:

Հոն՝ ուր հայր, մայր ու զաւակներ առհասարակ բարեպաշտ, երկիւղած, կրօնասէր և եկեղեցասէր են, հազուադէպ է որ աններդաշնակութիւն և անբարոյութիւն երևին. մինչ ասոր հակառակը ստէպ կ'ստուգուի, և անհաւատարիմ ամուս-

սիններ բազում այն է որ նախ և առաջ իրենց խիղճը խաբած կ'ըլլան, իրենց Աստուծոյն դէմ անհաւատարիմ գտնուած կ'ըլլան, և ուրիշ աւելի սերտ, աւելի անձնական պարտականութիւններու թերանալէն առաջ, իրենց կրօնային պարտաւորութիւնները զանց ըրած կ'ըլլան արդէն:




Թ.

Մարդասիրութիւն

Մարդավարութիւնը կամ քաղաքակրթութիւնն ուրիշ բան չ'է, եթէ ո'չ մարդասիրութեան, ներողամտութեան և բարեսիրտութեան զգացմունքնիս յայտնել ուրիշներուն. — թէ որ սրտիդ մէջ այսօր յայտնել ուրիշներուն ունիս՝ առանց նեղութեան կը պիտի զգացմունքներ ունիս՝ առանց նեղութեան կը յայտնես, և բարի ու ազնուասիրտ կը համարուիս. բայց թէ որ չ'ունիս՝ ու կ'ուզես ձեռքդ կեղծաւոր և ու խաբեբայ: Մարդասէր, ներողամիտ և բարեսիրտ եղի՛ր. առանքէն մարդավարութեան ծաղիկները:

ՄԱՐԴԱՍԻՐ. — Ուրիշին յաջողութեանը վրայ ուրախացի՛ր և թշուառութեանը վրայ տրամէ՛. որչափ որ ձեռքէդ կուգայ՝ նայէ՛ ուրիշին չարիք չի հասցընես ու տհաճութեան պատճառ չ'ըլլաս. այլ ջանա՛ մանաւանդ ընկերութեան ուրախութիւնները շատցնել:

ՆԵՐՈՂԱՄԻՏ. — Թեթև նախատանայ ներէ՛, ուրիշին գործերը ՚ի բարին մեկնէ՛, պակասութեանց արդահատէ՛, յիշելով որ «մարդկանց մէջ կատարեալը քիչ պակասութիւն ունեցողն է». մի՛ պահանջեր



որ ուրիշները քեզի պէս հազուին, ուտեն, մտածեն
ու խօսին, այսպիսի անտարբեր բաներու մէջ ուրիշ-
ներուն ազատութիւնը մի' բռնադատեր:

ԲԱՐԵՍԻՐՏ.— Մարդկանց միշտ աղէկութիւն-
ները տես' աւելի անոնց առաքինութեանցը հաւատք
ընծայէ՛ քան ախտերուն. որով սիրէ՛, յարգէ՛ և
կարեկից եղիր, պատրաստ ըլլալով ամէն տեսակ
բարիք ընելու:



ժ.

Զուարթութիւն

Ով որ զուարթ ոգի վը կը կրէ՝ օրհնութիւն կը
տանի ո'ւր որ երթայ: Իրաւունք չ'ունինք մեր
քանդատներով և արտունջներով մարդոց մէջ եր-
թալու: Մեր ընկերսիրութեան պարտքին մէկ մասն
է՝ միշտ մեր լաւագոյն բաները տանիլ մեր ընկեր-
ներուն: — զուարթութիւն, սէր և խնդութիւն,
փոխան տխրութեան, դաժանութեան և վհատու-
թեան: Մեզի պատուիրուած է լոյս ըլլալ աշխարհի,
այնպէս փայլեցնել մեր լոյսը մարդոց առջև, որ
անոնք տեսնեն մեր բարի գործերը և փառաւորեն
մեր Հայրը, որ երկինքն է: Դժգոհութիւն, զանգատ
և տխրութիւն լոյս չ'ունին: Եւ մեր կեանքերուն
կոչումը, այն որ Աստուծմէ սահմանուած է, երբէք
չ'իրագործուիր, եթէ թոյլ տանք, որ տխրութիւն
պատէ մեզ: Ծածկելու ենք մեր ցաւը, մեր տրտ-
մութիւնը, մեր սրտին նեղութիւնը, ընդունելով
Աստուծոյ քաղցր մխիթարութիւնը և թողլով որ
Աստուածային խաղաղութեան լոյսը ծագէ մեր ե-
րեսին վրայ:

Ով որ միշտ զուարթ է՝ պարագաներուն և պայ-

մաններուն կ'իշխէ և կը յաղթէ: Բան մը չի կրնար յաղթահարել զայն: Զուարթութիւնը քաջասրտութիւն է, նաեւ առողջ կը պահէ մարդը. զուարթութիւն չ'ունեցողը հիւանդ մարդ է:

Այն որ իրեն և ուրիշներուն կ'ըսէ թէ «հիւանդ է», իրօք հիւանդ է: Բայց այն որ այսպէս չ'ընդունիր թէ՛ հիւանդ է և զուարթութեամբ կը շարժի, որպէս թէ առողջ ըլլար, կը յաղթէ շատ տկարութիւններու, որոնք կրնային ծանրանալ, եթէ ինքը տեղի տար անոնց: Զուարթութիւնը առողջութեան նախնական գաղտնիքն է. առողջ կը պահէ մարդը: Յաւիտենական երիտասարդութեան գաղտնիքներէն մին է զուարթութիւնը:



ԺԱ.

Փրակկիւնի ծրագիրը

Բենիամին-Փրակկիւն (1706-1790) բարոյական կեանքի մը ձգտելու, իր թերութիւններն ուղղելու, բարի սովորութիւններու մէջ ինքզինքը ամրացնելու և առաքինի կեանք վարելու դիտաւորութեամբ՝ բարի յատկութիւններու ցուցակ մը շինեց, որ է հետեւեալը. —

1. — Ժուժկալութիւն. — Մի՛ ուտեր այնքան, որ անասուն դառնաս. այնքան ալ մի՛ խմեր, որ զլուխդ բորբոքի:

2. — Լռութիւն. — Միայն այն խօսէ՛, ինչ որ քեզ և ուրիշներուն օգտակար է, և զգուշացիր անշահ և սնոտի խօսակցութիւններէն:

3. — Կարգապահութիւն. — Ամէն մի բանի որոշ տեղ տուր, ամէն մի գործիդ որոշ ժամանակ:

4. — Վճռականութիւն. — Վճռէ՛ կատարել ինչ որ պիտի ընես, և կատարէ ինչ որ վճռած ես:

5. — Սակաւապէտութիւն. — Անօգուտ ծախք մ'ըներ ո՛չ քեզ և ո՛չ ալ ուրիշներու համար. ըսել է թէ՛ մի՛ լինիր վատնող:

6. — Զանաւորութիւն. — Ժամանակդ երբէք

մի՛ կորսնցներ, միշտ օգտաւէտ գործով պարապի՛ր.
ըրէ՛ ինչ որ միայն կարեւոր է:

7. — Անկեղծութիւն. — Մի՛ ընտրեր խոստո-
նակ ճանապարհներ, և փոյթ տար որ միայն անկեղ-
ծութիւնն և պարզութիւնը մտքիդ առաջնորդ ըլլան:

8. — Արդարութիւն. — Ոչ ոքի դէմ անիրա-
ւութիւն մի՛ գործեր, և ըրէ՛ ուրիշներուն ինչ որ
նոքա իրաւունք ունին քեզմէ սպասելու:

9. — Երկայնամտութիւն. — Զգոյշ կայ ծայ-
րայեղութենէն և վրէժխնդիր մի՛ լինիր քեզ վիրա-
ւորողներէն, թէպէտև կարծէիր թէ՛ անոնք ար-
ժանի են ատոր:

10. — Մաքրասիրութիւն. — Ո՛չ մարմնոյդ
վրայ կեղտ համբերէ՛, ո՛չ շորերուդ վրայ և ո՛չ ալ
բնակարանիդ մէջ:

11. — Անդորրութիւն. — Զնչին կամ սովո-
րական և անխուսափելի պատահարներէն մի՛ վըր-
դովիր և մի՛ զայրանար: («Պարտ է յամենայնի
հանդարտ ընթանալ»):

12. — Ողջախոհութիւն. — Անբիծ և մաքուր
կեանք վարէ՛, որպէսզի ո՛չ քու հանգստութիւնդ
և բարի համբաւդ վնասուի, ո՛չ ալ ուրիշինը:

13. — Խոնարհութիւն. — Նմանէ՛ Յիսուսին
և Սոկրատին:



ԺԲ.

Յաջողութիւն

Եթէ կ'ուզես կեանքի պայքարին մէջ յաջողու-
թեան դափնին շահիլ՝ ինչ որ ընես լաւագոյնը ըրէ՛:

* *

Անձնավստահութիւնը և կորովը՝ կեանքի պայ-
քարին մէջ, յաջողութեան ամենակարեւոր տարր-
ներն են:

* * 111

Յաջողութեան գաղտնիքը չէ թէ այս կամ այն
եղանակին կուրաբար փակչելուն, այլ պարագային
համեմատ վարուիլ գիտնալուն մէջն է:

* *

Կեանքի մէջ յաջողելու էական պայմաններն են
արիութիւն, յարսեւելութիւն և անբնկնելի կամք:
Մարդ կրնայ բարձր և ազնուագոյն խոէալներ ու-
նենալ, բայց երբ միեւնոյն ատեն չ'ունի տոկուն
կամք և յարատեւող ոգի, յաջողութիւնը միշտ պիտի
խուսափի անկէ:

* *

Գործի մէջ յաջողութիւնը բարեբախտաբար կախում ունի յաւէտ ուղիղ դատողութենէ, Զանաւորութենէ և կանոնաւորութենէ, քան թէ հանճարէ : «Դուք ձեր խանութը պահեցէ՛ք և ձեր խանութը զ'ձեզ պիտի պահէ» : Քսենոփոն կը պատմէ թէ՛ Պարսիկ թագաւորներէն մին ուզելով գեղեցիկ ձի մը կարելի եղածին չափ շուտ գիրցնել, այսպիսի բաներու մէջ իբր քաջ տեղեակ ճանչցուած մէկու մը հարցոյց թէ՛ ինչ՝ բան պէտք էր աղբոր յաջողելու համար . — «Իր տիրոջ աչիւր» պատասխանեց նա : Եւ պարապ տեղը չ'է որ Անգղիայիք կ'ըսեն միշտ թէ « Գործի տիրոջ երկու աչքը յիսուն գործաւոր կ'արժէ » :

*
* *

Մարդ մը որ շարունակ գործերուն գէշութեան վրայ կը խօսի՝ բնաւ յաջող մարդ չի կրնար ըլլալ : Երկարօրէն մի՛ որոճար որեւէ բանի մը մուծ կողմին վրայ : Մերժէ՛ խօսիլ առեւտուրը և գործերը գէշ ըլլալուն վրայ : Սորվէ՛ քաջալերիչ բաներ խորհիլ և ո՛չ թէ յուսահատական : Շատ մը գործի մարդեր կան, որոնց հինցած ակտն է միշտ զանգատիլ և յանցանք գտնել : Անոնց համար ամէն բան միշտ գէշ է : Ուրիշներ ալ կան, որ յոռետեսական ճամբէն երբէք դուրս չ'են կրնար ելլել, և որեւէ բանի մէջ փայլուն կողմ մը կամ յաջողութիւն մը տեսնալու երբէք կարող չ'են : Այս կարգի մարդոց համար անկարելի է յաջողիլ :

Ինքզինքդ զքեզ շրջապատող նիւթական ու

բարոյական չարիքներէն գեր'ի վեր համարէ՛ : Սորվէ՛ բարոյական վնասեցուցիչ ազդեցութիւններէն վեր բարձրանալ : Բանի մը փայլուն կողմին նայէ՛ աւելի քան թէ մթին և նսեմ կողմին : — Աշխարհք կը սիրէ յուսալից և ուրախ բնաւորութիւնները . կը խորշի արտամաթախիծ սպտղամախսներէն, որոնք միայն բարոյական ձախողութիւն և զժապուղութիւն կը տեսնեն ամէն տեղ : Յուսալից և զուարթ մարդիկ կը տեսնեն ամէն տեղ : Յուսալից և բարոյական իրենց գործերուն մէջ նիւթական և բարոյական յաջողութիւն կը տեսնեն . — ճիշտ այդ անձերն են, որոնք ամէն տեղ կը վնասուին : Ինչպէս բնական է որ մարդիկ կը սիրեն ամպերէն և ստուերներէն փախչիլ ու երթալ արեւուն լոյսին մէջ, նոյնպէս բնական է որ անոնք խորշին անհաճոյ, անախորժ և յուռետես մարդիկներէն :



Խորատ մկ Երկստասարդաց

Թէեւ խորատներն ա՛յնքան ազդեցութիւն կ'ընեն որքան բժիշկներուն զեղերը. բայց կը գրեմ այս քանի մը տողերը այն յուսով թէ զոնէ երկ տասարդի մը կ'ազդեն : Այս խորատներ չ'են բզ խիբ անկէ, որ կեանքը տեսականապէս միայն ուսումնասիրած է, և որուն կենաց նաւն յաջող ու նպատաւոր է, այլ անկէ՝ որ անընդհատ փոխորդի ներու և ալիքներու հետ մարանչած է, որ կեանքը զործնականապէս ուսումնասիրած է :

4. — Առանց ստուգութեան՝ կենաց մէջ ո՛չ մի բան նշանակութիւն և՛ արժէք չ'ունի. և ստուգ ըլլալու համար անհրաժեշտ է բարոյական վարժութիւն — և ո՛չ թէ վարդապետութիւն : Մարդիկ չ'են զեկաւարտելի գաղափարներով, այլ վարժութիւնով : Կրքերու և մոլութիւններու աշխարհին մէջ՝ լոկ վարժութիւնը բարիքն և օգտակարին՝ աւելի ապահով առաջնորդ մ'է, քան ոեւէ վարդապետութիւն, ոեւէ գաղափար և ոեւէ գիտութիւն :

2. — Աստուգութենէն յետոյ՝ Դրամը Է՛ն կար և որ բանն է կենաց մէջ. նա իր արժէքը չի գիտ

ցողները չի սիրեր, խոյս կուտայ անոնցմէ. ո՛չ ալ կ'ախորժի զինքը սրաշտողներէն, կը զրկէ զանոնք ամէն վայելքէ : Բարեկամ է միայն անոնց, որոնք կը ճանչնան իր արժէքը և չարաչար չ'են զործածեր զայն :

3. — Է՛ն պատուաւոր արհեստը կամ պաշտօնը այն չէ որ շատ շահ կը բերէ, ո՛չ ալ այն որ մեծ պատիւ կը վայելէ, այլ այն է որ արդար վատաւ կը բերէ և ՚ի վնաս ուրիշին չ'է :

4. — Ճշմարիտ քաղաքավարութիւնը անբաժանելի է վեհաճնութենէ և գթութենէ. և առանց անոնց՝ քաղաքավարութիւնը նշանակութիւն չ'ունի և լոկ աշխարհագրական խնդիր մ'է :

5. — Ամէն շահ՝ շահ չ'է, ամէն վնաս՝ վնաս չ'է. վնաս կայ որ շահ կը բերէ զործին ռեկլամ ընելով, շահ ալ կայ որ վնաս կը բերէ՝ զործին սրտաւոյն վնասելով :

6. — Իրերն իրենց երեւոյթէն մի՛ գտե՛ք. բնոյհանրապէս հակառակն են անոնք իրականին :

7. — Զեր զործին մէջ յոյս մի՛ գնէք բանի մը վրայ, մէկու մը վրայ. բայց եթէ ձեր անձին, Զեր անձն է ազդուագոյն ստատորը ձեր զործին :

8. — Կնոջ հետ շատ մտերմութիւն մի՛ ընէք, և ո՛չ ալ սեռային յարաբերութիւն, մինչև որ չ'ամուսնանաք :

9. — Լաւագոյնը մի՛ վնասէք, որպէսզի յոռու գունին չի հանդիպիք(*):

Ս. Մ.

(*) Լաւագունին անյաջ տեղի՝
Բառնայ և զարն առ ՚ի մեկոյ :

ԺՂ.

Գաղտնապահութիւն

Գաղտնապահութիւնը խորին քաղաքագիտութեան նշան է :

*
**

Ամէնէն լաւ պահուած գաղտնիքն այն է՝ որ ուրիշին չէ ըսուած :

*
**

Դիւրագրգիռ մարդիկ երբեք գաղտնապահ չեն կարող լինել :

*
**

Զգուշութեամբ ընտրէ այն մարդը , որուն մոտ քիչ գաղտնիքները կը յայտնեն :

*
**

Աւելի լաւ է մարդ իր գաղտնիքն ինքը պահէ , քան թէ ուրիշին տայ պահելու :

*
**

— 37 —

Դիւրընտել բարեկամ կրնաս ըլլալ , բայց գաղտնիքներդ պէտք է անթափանցելի մնան :

*
**

Եթէ դուն կարող չ'ես գաղտնիքդ պահել , իրաւունք չ'ունիս զայն 'ի յայտ բերող ընկերիդ դէմ՝ զանդատելու :

*
**

Քանի որ գաղտնիքս ուրիշի չ'եմ յայտնէր՝ բանտարկեալ գերիի մը պէս քովս կը կենայ , բայց երբոր ուրիշի յայտնեմ զայն , ես անոր գերին կը դառնամ :

*
**

Առաջուանէ փող դարնելը վտանգաւոր է . բայց նաև արդի քրիդիքական ժամանակիս մէջ՝ եղածն ամենայն անգաղտնապահութեամբ հրատարակելը՝ զոնէ խոհեմութիւն չ'է :

*
**

«Գաղտնիք մը ունիմ , բայց չ'եմ կրնար յայտնել» կ'ըսէ գաղտնիք պահել չի կրցողն եթէ հետը խօսիս՝ իսկոյն դուրս կուտայ պահածը . — ճշմարիտ գաղտնապահն՝ և ոչ իսկ բերանը կը բռնայ :

*
**

Ուրիշի գաղտնեաց հետամուտ մի՛ լինիր . եթէ

պատահի որ մէկը իր զաւանիքը քեզի յայտնէ, օգտակար խորհուրդ մը առնելու համար, — խորհուրդ տուր, բայց զաւանեաց ալ առանդապահութեան հաւատարիմ կեցիր:

*
* *

Ամենափոքր զաւանիքը իսկ մի' յայտներ ամենամեծերիմ կարծած ընկերիդ. վասն զի կան մաքս գիւյ, որ կատուի բնաւորութիւն ունին, երբ կը սիրես կը փայփայես՝ չորս կողմից կը դառնան քծնելով. իսկ երբ պոչերնին կոխես՝ լի յամամիջ երեսից կը ջատկեն:

*
* *

Ուրիշին զաւանիքը յայտնելը՝ մեր չ'եղած բանը մեր ուզածին սէս գործածել է. հաւատարմութեան և վստահութեան զէմ՝ մեծ յանցանք է և ուրիշի ստացուածքը գողնալէն աւելի ծանր ոճիր է. — վասն զի բայց 'ի գողութենէ՝ մտանութիւն է միանգամայն:

*
* *

Անդգուշարար բերնէն զաւանիք զուրս հանելը՝ շատ անգամ յաղթութիւն մը կորսնցնել բռն է: Անխորհրդաբար՝ ժամանակէն առաջ ըստած բառ մը միայն՝ բիւրաւորներու մահուան պատճառ եղած և մեծահաջակ գորապետներու համբաւը կորսնցուցած է:

*
* *

Ասանց մեծ հարկ մը տոխելու գլեղ՝ մի' յայտներ քու գլուշալի զաւանիքը ծառայից և մանաւանդ կանանց. որք կրնան զիւրաւ որոացուիլ, լռել չ'են կարող, չուտ կը սրբողին և միշտ բացբերան են. և ուտի շուտ կամ ոչ կը յայտնեն աչն բանը, որ հարկ էր ծածկել:

*
* *

Ով որ կը խօսի ամէնուն հետ իր գործերուն վրայ, կը տեսնէ որ շատ անգամ գէշ վերջ կ'ունենան. ամէն կողմէն անոր գէմ արդեւքներ կ'ելլեն, — անոնցմէ իսկ սրաց վրայ աւելի վստահ էր: Սոր հուրդ մը որ կը յայտնուի՝ շատ անգամ նոյն է թէ ձախողէր: Ամէն տեսակ գործերու և խորհրդերու մէջ յաջողելու աղէկ կերպը՝ զանոնք ծածուկ սրահելն է. և այս է քաղաքական գիտութեան մոզական հետքը:

*
* *

Գաւանիքը զաւատ պահողին՝
«Ապրի'ս մնա'ս» տապին.
Գաւանիքը զուրս հանողին՝
«Կորի'ր զն'ա» տապին:
(Հայկ. առած)



Ամերիկացոյն Քրիստոնէականը

Ամերիկացի հեղինակ մը, Պ. Սուրիթ Մարտըն, մին է այն գրողներէն, որոնք մեծ մարդերու կենսագրութիւնները գրելով՝ իբր կենդանի օրինակ կ'ուզեն երիտասարդներուն աչքին առջև դնել: Այս նպատակաւ հարիւրաւոր գրքեր կան գրուած: Իր վերջին մէկ գործին ծայրը շարած է հետեւեալ 18 պատուիրանները, որոնք ամէն բանէ աւելի կրնան մեզ տեղեկացնել թէ՛ Ամերիկացին ի՞նչպէս կը հասկնայ կեանքը. —

1. — Պատե՛հ առթի մի՛ սպասէ՛ք, այլ առիթը տեղծեցէ՛ք:

2. — Երբ երիտասարդ մը հաստատամտութիւն ունի և Այբ ու Բէնը գիտէ, անկարելի է գուշակել թէ՛ իր յաջողութիւնը մինջև ու՛ր պիտի հասնի:

3. — Ձեր ժամանակին մէկ վայրկեանը մի՛ կորսնցնէ՛ք, եթէ՛ Կլատտիոնի պէս հանճարի աէր մարդ մը միշտ գիրք մը ունի գրպանը, վախճալով որ կեանքին մէկ վայրկեանը կը կորսնցնէ, սովորաւ կան մարդ մը ի՛նչ միջոցներ ձեռք առնելու է՝ ժամանակը չի կորսնցնելու համար:

4. — Ձեր միակ մտազգաղութիւնը թո՛ղ ըլլայ ասորէ՛ք մը ընտրել ձեզի: « Ինչ՞ բանի օգտակար ես ».— այս է զարուն հարցումը:

5. — Ձեր բոլոր կորովը միակ ու անփոփոխ նպատակի մը վրայ կեդրոնացուցէ՛ք: Պարապ վարանումներով ժամանակ մի՛ անցընէ՛ք: Զանազան բաներու վրայ մի՛ խորհի՛ք, այլ միակ բանի մը վրայ յամառօրէն:

6. — Անցեալին կամ ապագային վրայ մտածելով ժամանակ մի՛ կորսնցնէ՛ք. այլ ուշադիր եղէ՛ք ներկայ վայրկեանը չի փախցնելու:

7. — Զուարթ եղէ՛ք. — և վարժուեցէ՛ք կեանքը զուարճալի զանալու:

8. — Բարեկիրթ եղէ՛ք. — բարեկիրթ մարդը կրնայ առանց հարստութեան ալ իր ճամբան շարունակել, բոլոր դռները կը բացուին իր առջև, և ամէն տեղ կրնայ մտնել առանց դժուարութեան:

9. — Ամէնէն բարձր տաղանդը վարժողութեան և ողջմտութեան տեղը չի բռներ: Կեանքի արշաւին մէջ ողջմտութիւնն է միայն, որ յաջողութեան դռները կը բանայ մարդու առջև:

10. — Ինքզինքնիւ յարգեցէ՛ք և ձեր անձին վրայ վստահութիւն ունեցէ՛ք. ուրիշներուն ալ վստահութիւն ներշնչելու լաւագոյն միջոցը այս է:

11. — «Աշխատէ՛ կամ մեռի՛ր».— այս է բնութեան նշանաբանը: Եթէ դադրիք աշխատել՝ մոռաւորապէս, բարոյապէս և նիւթապէս կը մեռնիք:

12. — Նկարագրիք ունեցէ՛ք, յաջողութիւնը նկարագրէն կը ծնի:

13.— Ըշտութիւնը տաժանքով սիրեցէ՛ք. կառարեալ զործ մը կիսկատար քան զործէն աղէկ է:


14.— Ձեր կեանքը ինչ որ ընէք այն կ'ըլլայ: Աշխարհ՝ մեր տունը կը վերադարձնէ մեզի:

15.— Ձեր անյաջողութիւններէն օգտուելու վարժուցէ՛ք:

16.— Ձի կայ բան մը որ հաստատամտութեան չափ օգտակար ըլլայ: Հանճարն իսկ երբեմն կը վարանի, կը խորխորի և կը յոգնի. բայց հաստատամտութիւնը միշտ ապահով է որ սկսի շահի:

17.— Աշխատեցէ՛ք կատարելագէտ առողջ ըլլալ և շատ ապրիլ: Յաջողութեան առաջին պայմանն է «առաջնակարգ կենդանի» մը ըլլալ:

18.— Կարուկ եղէ՛ք. և ինչ զործ որ ունենաք՝ չուտ տեսէ՛ք:



ԺԶ.

Ճշմարիտ իմաստներ

Ճշմարիտ խոստումներ՝ առանց հրաւերի, միայն փայլելու համար, խնջոյքի չ'երթար. այլ կ'սպասէ որ հրաւիրեն զինքը: Հրաւիրուած ժամանակ ալ, սերիշներու նման, կը յարմարի քաղաքավարական կանոններուն և պատշաճութեան պայմաններուն: Եթէ իրմով շատ չի հետաքրքրուին ալ, ապա համար երբէք զժողովութիւն չի յայտներ: Առաւօտէն մինչև երեկոյ նորանոր բաներ կը սորվի: Երբ իրեն պաշտօն մը առաջարկուի, եթէ իւր մէջ առ այդ ընդունակութիւն և յարմարութիւն զտնայ՝ կ'ընդունի այդ պաշտօնը և կը կատարէ ամենայն ճշգրտութեամբ: Յարգանքներ չի փնտռեր, հարստութեան հետամուտ չ'ըլլար: Անոր միակ ցանկալի հարստութիւնը իմաստութիւնն է. իրեն համար ամենամեծ պատիւը իմաստուն կոչուիլն է: Կը մտերմանայ հաւատարիմ մարդիկներու հետ, կը խօսակցի անկեղծներու հետ, մեծերու առջև չի նուաճանար, ամբոխի առջև չի գոռոզանար. առաջիններու հետ յարգանքով կը վերաբերուի, իսկ վերջիններուն հետ սիրով: Եթէ որեւէ պակասութեան համար մէկը

յանդիմանել կամ խրատել պէտք ըլլայ, վերին առ-
տիճանի զգուշութեամբ կ'ընէ այլ բանք, և ոչ ոքի
արժանապատուութեան չի գաչիր: Կը յարգէ խելացի
մարդիկը, բայց անոնց զովնաներուն արժանանալու
համար ջանքեր չ'ընէր. անոնց առջի ո'չ կ'ստորնա-
նայ եւ ո'չ ալ կը հպարտանայ: Ամէն ժամանակ և
ամէն բանի մէջ կատարելով իր պարտքը՝ բանէ մը չի
վախնար: Ծշմարտութեան, արդարութեան և օրէնքի
զէնքերով կը պաշտպանուի ամէն տեսակ յարձա-
կումներու դէմ: Առ հասարակ լոլոր մարդիկն ալ
սիրելով՝ ոչ ոքէն վախնալու պատճառ մը ունի. եւ
ո'չ իսկ բարբարոսներէն երկիւզ կը կրէ: Որքան
ալ շատ բան գիտնայ՝ դարձեալ իւր գիտութեան
պաշարը ընդարձակելու համար շարունակ կ'աշխատի:
Անորաւ Վարք ու բարքի տէր ըլլալով հանդերձ՝
միշտ կը հսկէ ինքնիրեն վրայ: Ազնիւ և բարի ը-
լալու համար ամէնամենչան բանն անգամ կարեւոր
կը համարի: Պաշտօնավարութեան ժամանակ խոս-
տապահանջ է. բայց ամէնուն հետ միտկեցող սիրտ-
լիր և բարեհամբոյր. բարեկամներու շրջանակին մէջ
ալ զուարթ և զիւրամտոյնի: Թէպէտև միշտ կ'ա-
խորժի իմաստուններու հետ ըլլալ, բայց ոչ-իմաս-
տուններն ալ չ'արհամարեր: Ընտանեաց մէջ անխոր
կը սիրէ բոլոր իրենները: Եթէ մէկը խօսքով կամ
գործով վիրաւորէ զինքը՝ չի գայրամար և չի բար-
կանար: Ի'նչ վիճակի մէջ ալ գոհուի՝ միշտ կ'աշ-
խատի օգտակար հանդիսանալ իւր հայրենիքին կամ
համաքաղաքացիներուն: Որեւէ օգտակար ծառայու-
թիւն մատուցանելէ յետոյ՝ չի պարծենար, այլ հա-

մեստութեամբ կ'սպասէ վարձատրութեան. իսկ եթէ
չի վարձատրեն՝ չի տրտնջար, չի գանգատիր: Ազնիւ
մարդիկներուն գովեստը և այն մասին իւր սեփական
գիտակցութիւնը թէ՛ ինքը լաւութիւնը քրտն է լա-
ւութեան համար,— ասոնք են իւր մեծ վարձատ-
րութիւնը: Եթէ յարգեն զինքը՝ չի հպարտանար.
այլ ըստ առաջնոյն մատչելի կը լինի ամէնուն եւ
խրաքանչիւրին: Նախանձ, ամբարտաւանութիւն եւ
ատելութիւն անձանօթ են իրեն. — ամէնուն հետ
սիրով և համերաշխութեամբ կ'ապրի և իրեն կը
գրաւէ ընդհանուրի համակրանքը: Իսկ իմաստու-
թեան ամէնազլխաւոր աղբիւրն է Սէր և Կարեկցու-
թիւն գէպ 'ի բոլոր մարդկութիւնը:

ԿՈՆՖԻՑԻՈՍ

)))

թէ.

Հոյակաւոր Քարոզից Պիլլորի նամակը

Ամերիկացի համբաւուոր և բազմաթիւն քաւ-
րողիչ Մր. Պիլլոր հետեւեալ նամակը գրած է իւր որ-
դւոյն, երբ սա իւր կեանքին մէջ՝ առաջին անգամը
ըլլալով՝ անկախ ձեռնարկութիւն մը պիտի սկսէր:
Կ'արժէ հրատարակել զայն, նոյն իսկ սա պատճառ-
աւ որ Մեծ քարոզիչը այս նամակը գրած է՝ ըն-
դհանուր երկատարգմտութեան համար, այլ կ'ուզէ
զայն այն երկատարգմտին, որուն յաջորդութեան նը-
կատմամբ զօրաւոր և մասնաւոր նախանձաւորու-
թիւն ունէր: Այս նամակը կը պարունակէ խրատ-
ներ, որոնք ամէն երկատարգմտի ուշադրութեան
արժանի են. —

Սիրելի գումակա Հէրպէ՛րթ

Հիմա առաջին անգամն է որ իրապէս կեանքի
մէջ կը նետուի առանձին: Կը մեղինա հօրդ առնէն
և կը բաժնուի բոլոր ազգականներէդ, որպէսզի
քու գործը զուն կատարեա աշխարհի վրայ: Յար-
մար ժամանակ է հիմա, որ նոր կեանք մը սկսիս և
մէկըլի ձգես այն թերութիւնները, որոնց վնասա-
կարութեան փորձը տուած ես, և ստանաս այն տե-

սակ սովորութիւններ, զորս չ'ունենալուդ վնասները
տեսած ես:

1. — Պարտք մի՛ ըներ, պարտքէ՛ այնպէս
խորշէ՛ ինչպէս կը խորշիս սատանայէն: Հիմնական
կանոն մը ըրէ քեզի՝ բանի մը պինդ վճարել. ապա
թէ ոչ՝ երբէք չի գնել զայն:

2. — Շատ խոտուեմներ մի՛ ըներ. կրօնական
տկնածանքով ամէն խոտումը կատարէ: Այն մարդը
որ իւր խոտուեմները կատարելու նպատակ ունի՝
չի կրնար շատ խոտուեմներ ընել:

3. — Քու ամէն խօսքերուդ ճշմարտութեան
շատ խղճահարութեամբ հոգ տա՛ր: Կատարեալ
պարզութեամբ և ճշտութեամբ խօսէ՛. կարծիքով մի՛
խօսիր: Կամ բան մը մի՛ բեր, կամ ճշգրիտ ճշմար-
տութիւնը ըսէ՛:

4. — Երբ ուրիշներու համար կը գործես՝ քու
անձը մոռցի՛ր և անոնց օգուտը փնտէ՛: Ժրտմ-
եամբ, հաւատարմութեամբ և ամենայն ուղղութ-
եամբ գործէ՛, այնպէս որ անհրաժեշտ նկատուիս
քու լաթթոններուդ կամ՝ գործատէրներուդ գործին:
Անձնաւորութիւնը կը կործանէ մարդը:

5. — Քեզի համար ունեցիր վարքի բարձրագոյն
զազախարական մը, քան զոր ուրիշներ կ'աշխատեն:
Անձէդ տուի բան պահանջէ՛ քան ուրիշներէ՛:
Բարձր բռնէ՛ զաղարարականդ: Երբէք մի՛ ջոնար
աչքիդ առջի արդարացինը անձը: Երբէք մի՛ խղ-
ճար անձիդ վրայ: Խիստ տէր մը եղի՛ր անձիդ,
ստիպէ՛ մեզմ' եղի՛ր ուրիշներու:

6. — Կարողութիւններդ բուն քու գործիդ նու-
իրէ՛: Յարստեալ, հաստատամիտ և անդրդուելի
եղի՛ր:

7. — Հարստանալու ճամբան է «բան մը չի վառնել»։ Այս աշխարհի մէջ ամէն մտացի և աշխատանքի երկրասարդ կրնայ հարստանալ՝ եթէ գոյէ այն բոլոր ծակտիքները, ուրկէ ստակը դուրս կը հոսի, և եթէ չ'աճապարէ հարստանալու։ Մի՛ աճապարեք, համբերող եղի՛ր։

8. — Շահագործութիւն մի՛ ըներ և բազմախաղ մի՛ խաղար։ Կ'երթաս այնպիսի երկիր մը, ուր ամէն ոք յուզման մէջ կը գտնուի և կը քանայ մեծ հարստութիւն դիզել քիչ ժամանակի մէջ և տաճնց աշխատութիւն թափելու անոր համար։ Այլ տեսակ անձեր օճառի պղպլակ շինողներ են։ Յարատև և համբերատար աշխատութիւնը թէ՛ ամէնէն ստոյգ և թէ՛ ամէնէն ապահով ճամբան է յաջողութեան։ Ազահութիւն և աճապարանք երկու դեւեր են, որոնք ամէն տարի հազարաւորներ կը կործանեն։

9. — Գալով Մ. Պ. . . ի, հարաւային նահանգներու բնակիչներէն է ան և զքեզ կ'ընդունի իմ սիրոյս համար։ Չ'ըլլայ որ զըզջալ տաս անոր զքեզ ընդունելուն համար։


10. — Կ'աղաչեմ քեզի, որ ուզդես սա թեւ բութիւնդ, որ է խառն քննադատող ուրիշները։ Ինչ որ ալ ըլլան պարագաները, երբէք չար մի՛ խռովիր մարդու մը վրայ։ Բացակայ անձերու վրայ աճապարանքով յանցանք գտնելը և խիտ քննադատութիւն ընելը պատուաւոր բաներ չ'են։ Կարելի է որ ճիշդ չ'ըլլան չ'են վայելի մարդասիրութեան, այս տեսակ բաներ՝ ուրիշները կը թշնամացնեն քեզ, և վերջապէս յոռի սովորութիւններ են։

11. — Պէտք է յիշես թէ՛ Մ. Պ. . . ի քով չ'ես երթար անոր ազարակին նման ազարակ մը կռաւարել սովորելու համար։ Քանի մը հարիւր և ո՛չ թէ հարիւր վաթսուն հազար արտավար հող պիտի ըլլայ քու ապագայ կալուածդ։ Սակայն կրնաս սովորիլ արջատ ու ոչխար բուծանել և յորեն մշակել. կրնաս ուսումնասիրել կլիմային փոփոխութիւնները, հողը, մարդոց շարժումները և սովորութիւնները, և ուրիշ հարիւրաւոր կարեւոր բաներ։

12. — Եթէ ուզդութեամբ, աշխատասիրութեամբ և պատուաւոր յաջողութեամբ արժանանաս քաղաքակիցներուդ համակրութեանը, թերեւ անոնք ապագայ տարիներուն մէջ քեզ պատուաւոր պաշտօններ տան. հետամուտ մի՛ ըլլար, մի՛ ընդունիր գանոնք՝ երբ դեռ փոքր ես. սպասէ՛։ Սակայն երբ հաստատուիս բարձր պաշտօնի մը մէջ, կրնաս հօրդ անունը պատուով ճանչցնել իմորհրդարանի որմերուն մէջ։ Վերջապէս մի՛ մոռնար հօրդ և մօրդ Աստուածը։ Որովհետեւ այսուհետեւ պիտի զրկուիս եկեղեցական շատ առանձնաշնորհումներէ, շատ զօրութիւն պէտք պիտի ունենաս Աստուծոյ նուիրուած պահելու համար սիրող, սակայն մի՛ արհամարհեր փոքր եկեղեցիները և խոնարհ դասու քարոզիչները։ «Ամբարտաւանութիւն մի՛ ընէք, հապա խոնարհներուն հետ

խոնարհեցէ՛ք» կ'ըսէ Առաքեալը : Հռովմ. ժր. 46 :

Յաճախ կարդա՛ Առականերու գիրքը և նոր հաս-
կարանի պատուէրներն ու պարտադրութիւնները :
Հօրդ Աստուածը հետդ ըլլայ և պաշտպանէ քեզ :



ԺԸ.

—

Բարի Վարժապետի մը խրատական խօսքերը

Առ իւր սիրելի աշակերտը

Ազնիւ սրբեա՛կ

Դու արդէն չափահաս ես՝ և փորձուած չաստ մը
բաներու մէջ . կարող ես զանազանել լաւ ու վատը :
Յոյսդ Աստուծոյ վրայ դրած՝ կը դիմես յօտարու-
թիւն , և չես գիտեր թէ՛ ի՞նչ պիտի պատահի քեզ
օտար երկրի մէջ , հեռի հայրենի տունէն :

Խեղացի մարդն ամէն նոր դիպուածի , նոր
սկսուած ձեռնարկութեան վրայ նախ և յառաջ գէշ
կողմէն կը նայի , աչքի առաջ կը բերէ աւելի վատ-
թար հետեւանքներ . անոնց դիմադրելու համար
հնարքներ և միջոցներ գտնելու կ'աշխատի : Մէկ խօս-
քով՝ պատրաստ կը կենայ քաջութեամբ և համբեր-
ութեամբ տանելու ամէն տեսակ նեղութիւններ :

Այդպիսի խոհեմ մարդը չաս չի խաբուիր իր
յոյսերուն մէջ . ուղղամտութեամբ յառաջ կը տանի

իւր գործերը . շատ չի նեղուիր՝ երբ իւր ուղածին պէս չի հանդիպիր ամէն բան , և հեշտ ու հանդիստ յաջողութեամբ 'ի գործ կը դնէ ինչ որ որոշած էր , ինչ բանի համար որ պատրաստուած էր :

Դուն աւելի չարիքներ կրած ես՝ քան թէ բարիքներ տեսած . անձամբ փորձած և քու կրած անտանելի տանջանքներով հասկցած ես որ մարդս — զժրագլարար — աւելի հակամէտ է դէպ'ի չարութիւնը , նախանձը , ատելութիւնն և դէպ'ի ամէն տեսակ յանցանքները , որոնք թէ՛ կորոտարներ են և թէ՛ ստորնայող :

Որքան մարդս յաջողակ է չարութիւններ նիւթելու գործին մէջ , և իրրեւ հոգեօր և մտաւոր արարած ընդունակ ամէն տեսակ հնարքներ մտածելու՝ իւր այդ նպատակին հասնելու համար , սակայն վտանգը մեծ է՝ երբ ըլլար՝ և թէ այդ միեւնոյն մարդը , ուրիշ արարածներու պէս , կարող չ'ըլլար ծածկել իւր մտադրութիւններն ու զգացածը . այսինքն թէ՛ մարդս շատ անգամ բարեկամութեան զիմակին տակ թշնամութիւններ կ'ընէ , առաքինութեան զիմակին տակ մոլութիւններ կը գործէ :

Արարիչը մարդուս տուած է ազատ կամք , զայն ստեղծած է իւր պատկերին նման . բայց մարդս տաւ կախն զո՞նչ է՝ իւր Ստեղծողէն , և անոր տուած ընդունակութիւններն 'ի չարն կը գործածէ :

Ի նկատի ունենալով այս դառն ճշմարտութիւնները , որոնց անձամբ փորձը առ իր շատ մը զխառածներու մէջ , խորհուրդ կուտամ՝ որ քեզ համար

կանոն ունենալ — « Գործ մը դեռ չ'սկսած՝ լաւ մտածել և խոհեմութեամբ , զգուշութեամբ և հետաւետեմութեամբ շարժիլ . և երբէք խօսք մը՝ առանց չափելու ու ձեւելու՝ բերնէդ դուրս չի հանել » :

Աշխատէ՛ ճարել քեզ համար հաւատարիմ բանեկամ և քու կողմէդ ջանք բրէ իրաւունք ունենալ անոր բարեկամութեանն արժանանալու . հաւատարիմ եղիր անոր . բայց և այնպէս յիշէ նախնի խնատասէրներու նկատողութիւնը , այն է — քու թող բնաւորութեամբդ և առանց անհրաժեշտ պատճառի՝ մի՛ վտանհիր մէկուն և զաղտնիքդ մի՛ յայտնէր . զխցած ըլլաս որ այս կերպով անոր ստրուկը կը դառնաս :

Երկիւղալի է որ այսպիսի պարագաներու մէջ ծայրայեղութեան մէջ իջնաս , և ազնուութեան հակառակ գործեր կատարելով սեյնես և ծանրութեանես քու մաքուր խիղճդ :

« Եղերս՝ ք խորագէտք իրրեւ զ'օծա և միամիտք իրրեւ զ'աղաւսիս » . — Այս աւետարանական խօսքի միտքն այն է թէ՛ մենք աշխատելու ենք ըլլալ խոհեմ , անմեղ և մեր նպատակներու և վարմունքներու մէջ մաքուր : Ուրեմն զատապարտելի չ'է խորագիտութիւնը՝ միայն թէ առանց նենգամտութեան , թո՛ղ քու խորագիտութիւնդ ըլլայ խոհեմութիւնը , և ուրիշներու անարդարութեան , դաւաճանութեան և նենգամտութեան դէմ անձնապաշտպանութիւնդ :

Իմաստութիւնը՝ առանց անվեղութեան ընկերակցութեանը՝ խորամանկութիւն է , իսկ անվեղութեանը՝

իւնը՝ առանց խմատութեան՝ անմտութիւն։ Օձին խորագիտութիւնը աղաւնիին անմեղութիւնը կը կրթէ, իսկ աղաւնիին անմեղութիւնը կ'ուղղէ օձին խորագիտութիւնը։

Բարի և պարզասիրտ եղիր. երկնային շնորհաց ճշմարիտ լոյսը կը բնակի բարի և առաքինի մարդկանց հոգւոյն մէջ։ Այս յատկութիւններու հիմունքը սրտի պարզութիւնն է, որ առաքինութեան միակ ընկերն է, իսկ առաքինութեանէն անբաժան է Աստուծոյ երկիւղը, որ սկիզբն է խմատութեան և անշիջանելի լոյս մտքուր հանձարի։

Վշտացուցիչ պարագաներու մէջ զսպէ՝ բարկութիւնը և զիւրազրգիւ մի՛ ըլլար։ Բարկութիւնը կրակի կը նմանի, որ կը լափէ իւր բոցերուն մատնուած ամէն բան, բայց վերջապէս ինքն ալ կ'ոչնչանայ։ Բարկացող մարդը, այն որ չի կրնար իւր սրտին չար կիրքերը կառավարել, կը դառնայ անմիտ և անհամբեր, ամէն մարդ իրմէն հեռու կը փախչի, մէկը զինքը չի յարգեր, ո՛չ ոք իրեն սէր և համակրութիւն ցոյց կուտայ. — մինչդեռ այս բոլորը մարդկային և հասարակական փոխադարձ շարաբերութեան համար ամենակարեւոր ամուր կապեր են։ Իսկ այդ ամէնը կորսնցնելով՝ մարդը ինքն իրեն կը վնասէ։

Այսպիսի մարդկանց հանդիպած ժամանակը ինքզինքդ զսպէ՝, համբերող եղի՛ր և հեզութեամբ աշխատէ՝ անոնց զայրացման և բարկութեան առաջին առնելու։

Ուր տեղ ալ լինիս՝ եղիր հաղանդ և հաւատարիմ տեղական թաղաւորին և անկէ կարգուած պաշտօնեաներուն. «ո՛չ յուստեք է իշխանութիւն, եթէ ո՛չ յԱստուծոյ»։

Այսքան նեղութիւններ կրելով՝ դու արդէն ընտելացար կեանքի բոլոր դառնութիւններուն և զժուարտութիւններուն. որպէս զի սխալ և անզղոյշ քայլերով չի վնասուիս, խոհեմութիւնը կը պահանջէ որ չի հրապուրուիս անտի յոյսերով և ո՛չ ալ զործերուդ հանգամանքներուն մէջ ածապարող ըլլաս. այլ պէտք է լինիս համբերատար և ձգտիս նպատակիդ հասնիլ աստիճանադար և ուղիղ ճանապարհով։

Ամէն բան կրնայ պատահիլ քու փափաքածէդ աւելի լաւ քան ապաստածէդ աւելի շուտ կերպով։ Դուն ամէն ինչ թո՛ղ նախախնամութեան կամքին, բարի մարդ եղի՛ր, յուսա՛ առ Աստուած և հաւատա որ նա մեր պէտքերն ու կարիքը զիսէ՝ «առաւել քան զոր խնդրեմք և խմանամք»։ Մենք շատ անգամ մեզի վնասակար բաներու հետամուտ կը լինինք. այնպիսի բաներու՝ որոց դէմ՝ կարողութիւն չ'ունինք ոչ նախատեսելու, ո՛չ նախազգուշանալու և ո՛չ ալ առաջին առնելու։

Իսկ եթէ Աստուածային ողորմութեամբ հասնիս բարօրութեան և վիճակէդ զո՛հ ըլլաս՝ եղիր չափաւոր և սակաւապէտ։ Արարչին պարգևած բարիքները ՚ի վնաս և ՚ի չարն մի՛ զործածեր, մի՛ զոռոգանար,

մի՛ հպարտանար . « Տէր ամբարտաւանից հովառակ
կայ , տայ զչնորհս խոնարհաց » :

Վերջապէս Սաղմոսերգու մարգարէի խօսքով
կը խրատեմ՝ զքեզ . « Կախի՛ր 'ի Հարեայ և արա՛
զբարին . խնդրեա՛ զ'խաղաղութիւն և գտնես զնա » :

ՎԵՐԶ



Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Յ

Երկու խօսք	5
Ա .— Աշխատութեան արդիւնքը	9
Բ .— Կոնֆիցիւսի ծրագիրը	11
Գ .— Տասնաբանեան	13
Դ .— Մարդը	15
Ե .— Դործի տաան և մէկ կանոններ	17
Զ .— Պարոն Ռոչիլտի ծրագիրը	19
Է .— Կրօնք . 1 .	21
Ը .— Կրօնք . 2 .	23
Թ .— Մարդավարութիւն	25
Ժ .— Զուարթութիւն	27
ԺԱ .— Ֆրանկլինի ծրագիրը	29
ԺԲ .— Յաջողութիւն	31
ԺԳ .— Խրատ մը երիտասարդաց	34
ԺԴ .— Գաղտնապահութիւն	36
ԺԵ .— Ամերիկացւոյն Բրիտոնէականը	40
ԺԶ .— Զյմարիտ իմաստունը	43
ԺԷ .— Քարոզիչ Պիչըրի նամակը	46
ԺԸ .— Բարի վարժապետի մը խրատական խօսքերը առ իւր սիրելի աշակերտը	51

ՀՀ Ազգային գրադարան



NL0152338

1-0

ԳԻՆ 2 ԴԱՆԵԿԱՆ